

25. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԴԱՐՎԵՇ

Ժամանակին կէղնի թագավորըմ։ Ըդ թագավոր դարվեշ խըլը-ղի կմտնի, կէլնի զուր էրկիրներ կօլըրդի։

Քաղքից օր դուրս կէլնի, բանձր սարում՝ վրա, ճամբեն լէ ըդ սարու վրավեն կրնցնի, ռաստ կիգա դարվեշիմ՝, օր կտեսնա նստեր է ճամփու օրթեն ու թուղթ կէնե ու կիտա քամուն, կէրթա։

Բարև կիտա, բարև կառնե։

Կըսե.—Դարվե՛շ բաբա, ըդ ի՞նչ է կէնիս։

Կըսե.—Բան չէ, թաջալ կիշքեմ, որն օր կիգա, կընցնի բանըմ կիտա, ես լէ բանըմ կգրեմ ըդրա մատ-մատ թղթերու վրա, կիտամ քամուն, կառնե. կէրթա։

— Է՛,—կըսե,—մատամ օր հըմալ է, կըռնա՞ս թուղթըմ լէ ընծի էնիս։

— Հո՞րի չըմ կըռնա էնիմ։

Կըսե.—Ըպա դը էրե։

Կառնե զթուղթ ու խալամ ուր ձեռք, մատըմ թղթի վրա կչտ-խըռտե, կիտա քամու հետ, քամին կառնե կէրթա ու կդառնա։ Կըսե. — Քու թաջալն ըդա է, քղիկ մեկուճար տղեմ՝ կա, իրեք ամսեն վերջ օձ պիտի խեթե, մեռնի։

— Հեյ վա՜խ,—կըսե,—իմ օտք կոտրեր, ես չիգենք ըդա տեղ, ըդ ի՞նչ էր լսի ես։

Թորկեց էդ տեղեն, դարցավ էկավ ուր տուն, մարդու բաս բան չէրեց, թե՝ հըմլա բանըմ ռաստ էկի ընծի։

Էկավ տուն, ինք էր ու մեկուճար տղեմ՝։ Վերուց զտղեն, հանեց տանքի վրեն, ճաղերով այվանըմ շինեց, դրեց մեջ, ըսեց. «Կանի տեսնամ օձ հ'ո՞ւստեն կիգա ըդա տեխ, խեթե զիմ տղեն»։

Զտղեն դրեց էն տեխ ու ուր քուլֆըթին, մարթերուն թանրիհ էրեց, օր մարդ չէրթա հ'իգա ուր տղի մոտ, հաց լէ մամ պետք է տանե, ներս չմտնի, փանջարից իտա հ'ինք ու դառնա հ'իգա։ Մինակ վարժապետին ըսեց.—Օրական էրկու հեղ ղու կիգաս, կէրթաս, դաս կիտաս իմ տղին ու կդառնաս էրթաս։

Էրկու ամիս ու կես ըդանա տղեն մնաց ընտեղ, սիրտ նեղեցավ, մարդու էրես էրկու ամիս ու կես մարդ չտեսնա, հետ չխոսա, իմա՞լ կէղնի. քըրբեն հ'իրարուց կպատռեր, խնդրվավ վարժապետից։ Ըսեց.—Ըդա էրկուս ու կես ամիս ես պարապ մինակ ներս մնալով իմ պապուց խնդրե, թողե էլնիմ դուրս, սահաթըմ օլըրդիմ ու դառնամ հ'իգամ, մտնեմ իմ հ'օդեն։

Վարժապետ գնաց թագավորից խնդրվավ, ըսեց.—Քու տղեն հըմլա կըսե։

Թագավորն ըսեց.—Բան չըմ ըսի, մատամ օր դու էկեր իս կխնդրվիս, իգին կիտամ օր դու տանիս օլըրցուս ու դառցուս բերիս։

Վարժապետն ըսեց.—Թը՛ղ էղնի։

Էլավ առավ գնաց։

Տարավ ջուկեն, կօլըրցուցներ, բանձր թուճարըմ տեսավ, օր ըդա թագավորի տղեն է, ու ուր վարժապետ կօլըրգին ջուկի մեջ, չէ՞ հ'ըմեն մարդ լէ հ'իմցեր է օր թագավորի տղեն ներս ու դուրս չէնե, կանչեց նստցուց, մեկ-մեկ խահվա իքրամ էրեց։

Սորա ֆուխարիմ՝ մեկ դուքներու հ'առջև կօլըրգեր ու ձեռք կէրկընցներ օր ուրին փարա իտեն։

Մարդում՝ մեկ ըսեց.—Տնավէ՞ր, ի՞նչ իս էկի կանի դուքներու հա՛ռեջ, տաս-տաս փարայի դիլանճուքին կէնիս, ըշթա թագավորի տղեն հանդե նստուկ ընա թուճրի դուքան, գնա կանի հ'առջև, բալքեմ բանիկըմ իտա քզի։

Ֆուխարեն գնաց կանավ, ըսեց.—Աղա՛, աղա՛, խուրբան էղնեմ քզիկ, քու արևու սատաղեն էղնի, բանիկըմ տուր, տանիմ իմ ճրժկընները։

Թագավորի տղեն ըդ մարդուց հարցուց, ըսեց.—Դու ի՞նչ տեղեն իս, ի՞նչ ճիժ ունիս։

Ըսեց.—Վալլա՜հի, ֆըլան գեղեն իմ, տաս, տըսվերկու ջան քյուլֆաթըմ ունիմ, նը՛ կտորըմ հող ունիմ, նը՛ ղատողըմ, ըդա ճարնկնութենով կապրիմ։

Թագավորի տղեն ֆարմանըմ գրեց, ըսեց.—Ըշթա ձըր դեղի խարաճ թըղ էղնի քղիկ։

Մարդն վերուց զուր ֆարման, գնաց։ Ձեն հ՝ընկավ քաղքի մեջ, թե՝ թագավորի տղեն հըմլա աղքտիմ՝ գեղըմ տվեց։

Լսեց ըդ խոսք թագավորի բաղչապան, ըսեց.—«Ջանը՛մ, ըդա քսան տարի է ես ծառայութեն կէնիմ, հըմլա բանըմ ընծի չէրին, վա՜յ բաղդ, մենակ իմ ամսական ին տվի,—ըսեց,—կանի, կարելի է թագավորի տղեն վըր թագավորին ռամով է, ժողվեմ կողովըմ թաժա նուբար էմիջ, տանիմ ուրին։ Բալքիմ գեղըմ լէ ընծի իտա»։

Ժողվեց լըցեց կողվիմ՝ մեջ օր առներ էրթեր թագավորի տղին։ Իմալ կէղնի, զկողով օր կգնե գետին, օձում՝ ձագ կքաշվի, կիգա կմտնի կողվի մեջ։ Կվերցու, կառնե, կիգա։ Կիգա, կտեսնա օր թագավորի տղեն էն դիեն կիգա։ Կտանե դնե հ՝առեջ։

Կըսե.—Ըդի ի՞նչ է։

Կըսե.—Ըպա թագա նուբար պտուղ ին, ըսի՝ ժողվիմ, առնիմ էրթամ թագավորի տղին։

Թագավորի տղեն մեկ քանի հատ կվերցու, կկըճպե, կուտե։

Կըսե բաղչեպըրնին.—Դը՛, տար դիր իմ հ՝օդեն, հար ես հ՝իգամ։

Բաղչեպան հանեց տարավ վերին դին, դրեց թագավորի տղի հ՝օդի դռան հ՝առեջ ու ուրին բաշխիշըմ առավ, հ՝իջավ, էկավ գնաց։

Թագավորի տղեն օր էլավ գնաց վերին դին, վերուց առավ գնաց ներս, տարավ դրեց աչկունք։

Մեկ քանի հատ օր բերեց կերավ, օձն էլավ կողվի միջեն, քաշվավ էկավ մտավ թագավորի տղի տեխի տակ։ Իմալ էղավ, թագավորի տղեն էդ գահ վերցուց ղչախուն օր կեղվեր զուր խընձորտանք, ուտեր։ Ձախուն փըստաց ձեռքեն, հ՝ընկավ խալու վրէն, ծակեց զխալին, գնաց քիսավ օձու գլուխ։ Օձու գլուխ ծակեց, օձ փիցավ, ըրլե թագավորի տղեն չիմցավ։

Երբ իրեկ ամիս լըմընցավ, թագավոր տեսավ, օր ուր տղին

քանրմ չէղավ, էլավ հագավ դարվեշի խրլրդ, գնաց էն տեխ օր դարվեշ նստուկ էր, թուղթ կէներ։

Բարև տվեց։

Դարվեշ ղրարև առավ ու ըսեց.—Աստծո՛ւ բարին, թագավո՛ր։

Բրլե հար էդա գահ չըր ըսի. «Աստծո՛ւ բարին, թագավո՛ր»։ Իմա՞լ դու գիցար ես թագավորն իմ։

Ըսեց.—Ես իմա՞լ չըմ գինա։ Իրեկ ամիս հ՚առեջ դու էկար ըդա տեղ, թաջալըմ բացի քղիկ, ըսի՝ «Քու տղեն իրեկ ամսուց վերջ կմեռնի». սորա դու դարցար գնացիր, քու տներու վրեն այ-վանըմ բերիր ջինեցիր, ղքու տղեն դրիր մեջ։ Էրկու ամիսն օր թը-մավ, էկավ քու տղի վարժապետ, հանեց տարավ։ Կէրթան թուճ-րիմ՝ դուքան, կնստին, էնտեխ ֆուխարա մարդըմ կիգա, օղորմու-թեն կուղե, քու տղեն գեղըմ կիտա։ Սորա քու բաղչեպան կողվով թազա նուբար կբերե քու տղին, օձըմ կէղնի մեջ։ Կիգա կմտնի քու տղի տեխի տակ, խալու մեջ։ Քու տղեն թավակալի կէղնի, զչախուն օր կվերցու, կփրթնի ձեռքեն, կընկնի, քիսնի օձու գլուխ, փիդնա։ Ջրս ավտրնա՞, հրմկա չախուն դրռ օձու գլուխն է։

Դարվեշն կըսե.—Քու տղեն օր էն աղեկութեն էրեց էն ֆու-խարա մարդուն, աստված ընդոր թաճալն բարու վրեն տարավ։

Թագավոր կդառնա կիգա, կտեսնա օր օձ հալա հանդե ուր տղի տակ, չախուն լէ գլուխ։ Կըսե.—Դարվեշի ըսածն օղորդ է։

Աստծուց հ՚իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։